# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 սեպտեմբերի 2018 թվականի N 242-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի մարտի 26-ի *«Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովների ձևավորման և գործունեության աշխատակարգը հաստատելու մասին»* N 74-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) ***Կարինե Հարությունյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ,»,

2) 4-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) ***Կարեն Հովսեփյան*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ *(բաժնի պետի պաշտոնակատար)*,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 04
ք. Հրազդան